ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МИНИСТЕРСТВО НАУКИ И ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РА
РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ПРАВА

«04» հուլիսի 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի

Հեղինակ՝ Սարկիսով Հ. Ա.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Տեղեկատվական տեխնոլոգիաները իրավաբանական գործունեությունում

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

ԲՄԿ ՊՈՒՀ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

1. Ներածություն

Այս դասընթացը բազմալեզու իրավական ռեսուրսների, առկա ալգորիթմների, մեթոդների և խնդիրների, որոնք ծագում են տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ճանապարհին, ինչպես նաև իրավական տեղեկատվության որոնման, վերլուծության, համեմատության, պահպանման, փոխանցման և սինթեզի մեթոդաբանության և ծրագրային կառուցման և ապահովման համակարգված սկզբունքների և մեթոդների ամբողջություն է:

Դասընթացն ուսումնասիրում է տեղեկատվության դերը անհատի, հասարակության և պետության կյանքում, դրա իրավական նշանակալի հատկությունները, ինչպես նաև տեղեկատվական իրավահարաբերությունների էության և բովանդակության առանձնահատկությունները, տեղեկատվական օրենսդրության բնութագրերը:

Դասընթացի ընթացքում վերլուծվում են տեղեկատվության իրավական ռեժիմները, հասարակության կյանքի ամենակարևոր ոլորտներում հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկությունները, ինչպես նաև տեղեկատվական ոլորտում իրավախախտումների համար պատասխանատվության հետ կապված հարցերը:

Դասընթացի նպատակն է՝

- Ուսանողների շրջանում տեղեկատվական մշակույթի ձևավորում.
- Ուսանողների մեջ սերմանել իրավական տեղեկատվության մշակման, պահպանման, փոխանցման և ընդունման տեխնոլոգիաներին տիրապետելու հմտություններ և ժամանակակից աշխարհում պրակտիկ իրավաբանի գործունեության տարբեր ոլորտներում դրանք կիրառելու տեխնիկա.
- Տեղեկատվական անվտանգության հիմնական սկզբունքների, դրանց իրականացման մակարդակների, այդ թվում՝ պետական գաղտնիքի պաշտպանության ուսուցում այն իրավական կառույցներում, որտեղ աշխատելու են ապագա իրավաբանները.
- Ուսանողներին սովորեցնել ամենատարածված տիպի տվյալների բազայի կառավարման համակարգերի հետ աշխատելու հիմնական կանոնները, գլոբալ համակարգչային ցանցերում տեղեկատվության հետ աշխատելը:

Դասընթացի խնդիրներն է՝

- հասկանալ տեղեկատվության էությունն ու նշանակությունը ժամանակակից տեղեկատվական հասարակության զարգացման պայմաններում.
- ուսումնասիրել իրավական գործունեության մեջ տեղեկատվության ստացման, պահպանման, մշակման և պաշտպանության մեթոդներն ու միջոցները.

- պահպանել տեղեկատվական անվտանգության, այդ թվում՝ պետական գաղտնիքի պաշտպանության հիմնական պահանջները, ուսումնասիրել և կիրառել Տեղեկատվության պաշտպանության մեթոդները.
- ձեռք բերել իրավական փաստաթղթերի պատրաստման և ձևակերպման, վիճակագրական ցուցանիշների մշակման, իրավական տեղեկատվության արդյունավետ որոնման հմտություններ:

Դասընթացի օբյեկտը և առարկան.

«Տեղեկատվական տեխնոլոգիաները իրավաբանական գործունեությունում» դասընթացի ուսումնասիրության օբյեկտը իրավաբանական պատշաճ գործունեության համար անհրժեշտ սահմանադրական և օրենսդրական բազայի ուսումնասիրությունն է:

«Տեղեկատվական տեխնոլոգիաները իրավաբանական գործունեությունում» դասընթացի առարկան՝ իրավաբանական գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվական տեխնոլոգիաների ուսումնասիրությունն է:

Դասընթացի մուտքային պահանջները.

«Տեղեկատվական տեխնոլոգիաները իրավաբանական գործունեությունում» դասընթացի շրջանակներում, առավել արդյունավետ կրթական վերջնարդյունքների ձևավորման համար, ուսանողներին անհրաժեշտ են բազային գիտելիքներ իրավագիտությունից, պետության և իրավունքի տեսությունից, ինչպես նաև հարակից մի շարք այլ իրավունքի ճյուղեր ուսումնասիրող առարկաներից:

2.1. Կրթական վերջնարդյունքները: Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

իմանա՝

գիտելիքի կիրառման հմտությունները՝

- «Տեղեկություններ ստանալու իրավունքը» սահմանադրական իրավունքի կարգավորման առկան, իրավունքի նկատմամբ իրավաչափ միջամտության հիմքերը, սահմանափակման համար անհրաժեշտ իրավաչաձի նպատակները.
- Սահմանադրական դատարանի պաշտոնական կայք-էջը՝ www.concourt.am
- Դատական իշխանության պաշտոնական կայք-էջը՝ www.datalex.am
- Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ՝ www.arlis.am

- Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը՝ www.e-request.am
- Հայաստանի Հանրապետության կառավարության էլեկտրոնային ռեգիստրը՝ www.e-registr.am

կարողանա՝

ընդհանրական իմացական հմտությունները՝

- Գործնականում կիրառել ձեռք բերված գիտելիքները.
- Կատարել վիճահարույց իրավիճակների իրավական վերլուծություն:

ունակ լինի՝

ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝

- Որոշելու «Տեղեկություններ ստանալու իրավունքը» սահմանադրական իրավունքի նկատմամբ միջամտությունն իրավաչա՞փ է, թե՞ ոչ
- Ինքնուրույն յուրացնել իրավաբանական գործունեությունում անհրաժեշտ տեղեկատվական տեխնոլոգիաները.
- Ինքնուրույն վերլուծել նորմատիվ իրավական ակտերը, դատական պրակտիկան.
- Վերլուծել հարկային իրավունքի աղբյուրներ հանդիսացող նորմատիվ իրավական ակտերը.
- Կատարել հարկային ոլորտում տարբեր իրավական երևույթների համեմատական վերլուծություն.
- Կարողանալ աշխատել հարկային ոլորտում շրջանառվող իրավական փաստաթղթերի հետ:

Դասավանդման եղանակները և մեթոդները.

«Տեղեկատվական տեխնոլոգիաները իրավաբանական գործունեություն» դասընթացն անցկացվում է գործնական պարապմունքների միջոցով: Գործնական պարապմունքների նպատակն է օգնել ուսանողներին ուսումնասիրել դասընթացի կարևորագույն խնդիրները, խորացնել և համակարգել ուսանողների գիտելիքները տվյալ ոլորտում:

«Տեղեկատվական տեխնոլոգիաները իրավաբանական գործունեություն» դասընթացն ուսումնասիրելիս կարևոր դեր է խաղում ուսանողների ինքնուրույն աշխատանքը:

«Տեղեկատվական տեխնոլոգիաները իրավաբանական գործունեություն» դասընթացի ընթացքում կիրառվում են բացատրական, տեղեկատվական, գործնական, վերարտադրողական, համեմատական, հետազոտման և մասնակի որոնման մեթոդները:

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Դասընթացը ներառված է «Ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբլոկում»՝ 2 ակադեմիական կրեդիտ (72 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 2-րդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**72**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**34**
1.1.1.Դասախոսություններ	**18**
1.1.2.Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**16**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**38**
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	
1.2.2.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**Ստուգարք**

2.3. Առարկայի ծավալը՝ 72 ժամ, կրեդիտ՝ «2» ECTS:

2.4. Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսու-թյուններ	Գործնական / սեմինար պարապմունքներ

ԲՄԿ ՊՈՒՀ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

1	2=3+4	3	4
Թեմա 1. Դասընթացի ներածություն. Հիմնական հասկացություններ Տեղեկատվական հասարակություն և իրավունք, հասարակության տեղեկատվականացում: Պետական տեղեկատվական քաղաքականություն: Հիմնական հասկացություններ: Օբյեկտ, առարկա, մեթոդներ, կապը այլ իրավական առարկաների հետ: «Տեղեկատվական տեխնոլոգիաները իրավական գործունեությունում» դասընթացի համակարգը: «Տեղեկատվական տեխնոլոգիաները իրավական գործունեությունում» դասընթացի կառուցվածքը. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում օրենսդրության վերանայում: Տեղեկատվության դերը անհատի, հասարակության և պետության կյանքում: Տեղեկատվական հասարակություն Ձևավորման փուլերը: Տեղեկատվական հասարակության ձևավորման բնագավառում պետական քաղաքականությունը	4	2	2
Թեմա 2. **«Տեղեկատվություն ստանալու իրավունքը»** Քննարկվում է Սահմանադրական հիշյալ իրավունքի կարգավորման առկան, իրավունքի նկատմամբ միջամտության հնարավորության առկայությունը, սահմանափակումների համար անհրաժեշտ իրավաչափ նպատակների ծավալները	3	2	1
Թեմա 3. **Arlis և Irtek տեղեկատվական համակարգերը** Arlis-ի և Irtek-ի իրավական տեղեկատվական համակարգերի ուսումնասիրում: Դրանց	3	2	1

բովանդակության բացահայտում և որոնման մեխանիզմների բացատրություն: Հայկական երկու տեղեկատվական համակարգերի արդյունավետության, առավելությունների և թերությունների դիտարկում:			
Թեմա 4. **DATALEX, ArmLaw և HUDUC տեղեկատվական համակարգերը** Իրավական տեղեկատվական համակարգերի ուսումնասիրում: Դրանց բովանդակության բացահայտում և որոնման մեխանիզմների բացատրություն: Հաշվի առնելով երկու տեղեկատվական համակարգերի արդյունավետությունը, առավելություններն ու թերությունները:	**4**	**2**	**2**
Թեմա 5. **Տեղեկատվական տեխնոլոգիաները իրավաստեղծ և իրավակիրառ գործունեությունում** Իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության տեղեկատվական հիմքերը: Ավտոմատացված տեղեկատվական համակարգեր: Տեղեկատվական տեխնոլոգիաները դատարաններում: Դատական դեպարտամենտի համակարգի, ինչպես նաև ՀՀ ՍԴ տեղեկատվական ռեսուրսի կառուցվածքը (http://court.am; concourt.am) տեղեկատվական տեխնոլոգիաները տարբեր ատյանների դատարաններում:	**4**	**2**	**2**
Թեմա 6. **Ակադեմիական իրավաբանական գործունեության տեղեկատվական տեխնոլոգիաներ** Դիտարկել Google Scholar-ի, Cyberleninka-ի և Scimagojr-ի գիտական հիմքերը: Դրանց բովանդակության բացահայտում և որոնման մեխանիզմների բացատրություն: Հաշվի առնելով այս	**4**	**2**	**2**

Ակադեմիական Տեղեկատվական համակարգերի արդյունավետությունը, առավելություններն ու թերությունները:			
Թեմա 7. **Արհեստական բանականության տեղն ու դերը իրավական գործունեությունում** Արհեստական ինտելեկտի առաջացման սահմանում, պատմություն և նախադրյալներ: Արհեստական բանականության կիրառման ժամանակակից միտումները իրավական գործունեությունում:	**4**	**2**	**2**
Թեմա 8. **Տեղեկատվական անվտանգության իրավական հիմնախնդիրները** Տեղեկատվական իրավահարաբերությունների օբյեկտների պաշտպանության իրավական հիմքը տեղեկատվական ոլորտում սպառնալիքներից: Անձի, հասարակության, պետության շահերի իրավական պաշտպանությունը անորակ տեղեկատվության ազդեցության սպառնալիքներից, տեղեկատվության տարածման կարգի խախտումից: Տեղեկատվության, տեղեկատվական ռեսուրսների և տեղեկատվական համակարգերի իրավական պաշտպանություն չարտոնված և անօրինական ազդեցության սպառնալիքներից: տեղեկատվության ոլորտում իրավունքների և ազատությունների պաշտպանություն տեղեկատվայնացման համատեքստում: Տեղեկատվական անվտանգության ոլորտում հարաբերությունների իրավական կարգավորման կառուցվածքը:	**4**	**2**	**2**
Թեմա 9. **Վիրտուալ ինտերներ ցանցի իրավական խնդիրները** Ինտերնետը որպես վիրտուալ միջավայր:	**4**	**2**	**2**

Իրավական ասպեկտները Ինտերնետում. Ինտերնետում տեղեկատվական իրավահարաբերությունների առանձնահատկությունները: Ինտերնետում տեղեկատվություն փնտրելու, ստանալու և սպառելու իրավունքի իրացման ոլորտ: Աղբյուրի փաստաթղթերի ստեղծման և տարածման, տեղեկատվական ռեսուրսների ձևավորման և Ինտերնետում տեղեկատվական ապրանքների և տեղեկատվական ծառայությունների մատուցման ոլորտները: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը և Ինտերնետում դրանց ապահովման միջոցները: Ինտերնետային տեղեկատվական անվտանգության իրավական ապահովման ոլորտը: Ինտերնետում տեղեկատվական հարաբերությունների իրավական կարգավորման հիմնական ուղղությունները:			
Ընդամենը	**32**	**18**	**16**

3. Դասընթացի թեմաները եւ ծավալները:

ՄՈԴՈՒԼ 1

Թեմա. Դասընթացի ներածություն. Հիմնական հասկացություններ

Տեղեկատվական հասարակություն և իրավունք, հասարակության տեղեկատվականացում: Պետական տեղեկատվական քաղաքականություն: Հիմնական հասկացություններ: Օբյեկտ, առարկա, մեթոդներ, կապը այլ իրավական առարկաների հետ: «Տեղեկատվական տեխնոլոգիաները իրավական գործունեությունում» դասընթացի համակարգը:

«Տեղեկատվական տեխնոլոգիաները իրավական գործունեությունում» դասընթացի կառուցվածքը. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում օրենսդրության վերանայում: Տեղեկատվության դերը անհատի, հասարակության և պետության կյանքում: Տեղեկատվական հասարակություն Ձևավորման փուլերը:

Տեղեկատվական հասարակության ձևավորման բնագավառում պետական քաղաքականությունը

Թեմա 2. «Տեղեկատվություն ստանալու իրավունքը»

Քննարկվում է Սահմանադրական հիշյալ իրավունքի կարգավորման առկան, իրավունքի նկատմամբ միջամտության հնարավորության առկայությունը, սահմանափակումների համար անհրաժեշտ իրավաչափ նպատակների ծավալները

Թեմա 2. Իրավական համակարգում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաները

Տեղեկատվությունը՝ որպես տեղեկատվական ոլորտի և իրավունքի համակարգի հիմնական օբյեկտ: "Տեղեկատվություն" հասկացության սահմանում: Տեղեկատվություն գործող օրենսդրության ակտերում: Տեղեկատվության դասակարգումը ըստ դրա դերի, որով այն հանդես է գալիս իրավական համակարգում: Տեղեկատվության դասակարգումը ըստ դրա հասանելիության: Տեղեկատվության իրավական առանձնահատկությունները և հատկությունները: Տեղեկատվական ոլորտի մոդելը, տեղեկատվական ոլորտի հիմնական և ապահովող ոլորտները: Տեղեկատվական անվտանգության հայեցակարգ: Ռուսաստանի Դաշնության տեղեկատվական անվտանգության ապահովման մեթոդներ: Տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգի դիտարկումը:

Թեմա 3. Arlis և Irtek տեղեկատվական համակարգերը

Arlis-ի և Irtek-ի իրավական տեղեկատվական համակարգերի ուսումնասիրում: Դրանց բովանդակության բացահայտում և որոնման մեխանիզմների բացատրություն: Հայկական երկու տեղեկատվական համակարգերի արդյունավետության, առավելությունների և թերությունների դիտարկում:

Թեմա 4. DATALEX, ArmLaw և HUDUC տեղեկատվական համակարգերը

Իրավական տեղեկատվական համակարգերի ուսումնասիրում: Դրանց բովանդակության բացահայտում և որոնման մեխանիզմների բացատրություն: Հաշվի առնելով երկու տեղեկատվական համակարգերի արդյունավետությունը, առավելություններն ու թերությունները:

Թեմա 5. Տեղեկատվական տեխնոլոգիաները իրավաստեղծ և իրավակիրառ գործունեությունում

Իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության տեղեկատվական հիմքերը: Ավտոմատացված տեղեկատվական համակարգեր: Տեղեկատվական տեխնոլոգիաները դատարաններում: Դատական դեպարտամենտի համակարգի, ինչպես նաև ՀՀ ՍԴ տեղեկատվական ռեսուրսի կառուցվածքը (http://court.am; concourt.am) տեղեկատվական տեխնոլոգիաները տարբեր ատյանների դատարաններում:

Թեմա 6. Ակադեմիական իրավաբանական գործունեության տեղեկատվական տեխնոլոգիաներ

Դիտարկել Google Scholar-ի, Cyberleninka-ի և Scimagojr-ի գիտական հիմքերը: Դրանց բովանդակության բացահայտում և որոնման մեխանիզմների բացատրություն: Հաշվի առնելով այս Ակադեմիական Տեղեկատվական համակարգերի արդյունավետությունը, առավելություններն ու թերությունները:

Թեմա 7. Արհեստական բանականության տեղն ու դերը իրավական գործունեությունում

Արհեստական ինտելեկտի առաջացման սահմանում, պատմություն և նախադրյալներ: Արհեստական բանականության կիրառման ժամանակակից միտումները իրավական գործունեությունում:

Թեմա 8. Տեղեկատվական անվտանգության իրավական հիմնախնդիրները

Տեղեկատվական իրավահարաբերությունների օբյեկտների պաշտպանության իրավական հիմքը տեղեկատվական ոլորտում սպառնալիքներից: Անձի, հասարակության, պետության շահերի իրավական պաշտպանությունը անորակ տեղեկատվության ազդեցության սպառնալիքներից, տեղեկատվության տարածման կարգի խախտումից: Տեղեկատվության, տեղեկատվական ռեսուրսների և տեղեկատվական համակարգերի իրավական պաշտպանություն չարտոնված և անօրինական ազդեցության սպառնալիքներից: տեղեկատվության ոլորտում իրավունքների և ազատությունների պաշտպանություն տեղեկատվայնացման համատեքստում: Տեղեկատվական անվտանգության ոլորտում հարաբերությունների իրավական կարգավորման կառուցվածքը:

Թեմա 9. Վիրտուալ ինտերներ ցանցի իրավական խնդիրները

Ինտերնետը որպես վիրտուալ միջավայր: Իրավական ասպեկտները Ինտերնետում. Ինտերնետում տեղեկատվական իրավահարաբերությունների

առանձնահատկությունները: Ինտերնետում տեղեկատվություն փնտրելու, ստանալու և սպառելու իրավունքի իրացման ոլորտ: Աղբյուրի փաստաթղթերի ստեղծման և տարածման, տեղեկատվական ռեսուրսների ձևավորման և Ինտերնետում տեղեկատվական ապրանքների և տեղեկատվական ծառայությունների մատուցման ոլորտները: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը և Ինտերնետում դրանց ապահովման միջոցները: Ինտերնետային տեղեկատվական անվտանգության իրավական ապահովման ոլորտը: Ինտերնետում տեղեկատվական հարաբերությունների իրավական կարգավորման հիմնական ուղղությունները:

1. https://www.arlis.am/
2. www.datalex.am
3. www.concourt.am
4. www.e-request.am
5. www.e-registr.am

5. Հարցեր եւ առաջադրանքներ ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար

Հարցաշար՝

1. «Տեղեկատվության ազատության իրավունքը» սահմանադրական իրավունքի կարգավորման բնագավառը:
2. «Տեղեկատվության ազատության իրավունքը» սահմանադրական իրավունքի սահմանափակման հնարավորությունները, սահմանափակման համար հետապնդվող իրավաչափ նպատակները:
3. ՀՀ Սահմանադրական դատարանի կայքը՝ http://www.concourt.am
4. Դատական տեղեկատվական պորտալ. http://www.datalex.am
5. ՀՀ նախագահի կայքը՝ http://www.president.am
6. ՀՀ Ազգային ժողովի կայքը՝ http://www.parliament.am
7. ՀՀ իրավունքի կայք: http://www.gov.am
8. Իրավական Տեղեկատվական բազա http://www.arlis.am
9. Իրավական Տեղեկատվական բազա http://www.irtek.am
10. Տեղեկատվական բազա http://www.armlaw.am
11. Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակ www.e-request.am
12. ՀՀ Կառավարության պետական ռեգիստր www.e-registr.am

6. Ստուգումների անցկացման ձեւը եւ գնահատման չափանիշները:

ԲՄԿ ՊՈՒՀ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

Խմբային քննարկում. Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր եւ տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն:

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում:

Գնահատման չափանիշները՝ պատասխանի տրամաբանական կառուցում, տեսական եւ կիրառական գիտելինքների համադրում, օրինակներ բերելու ունակություն, տեսակետների պատճառաբանվածություն:

Ստուգարք. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները եւ ելույթների վերլուծության ունակությունը ստացված գիտելինքերի արդյունքում: